ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«22» 11 2024թ.
№ ԳԱՀ ԳԱԴ-1717

«Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ (ՀՎՀՀ 03804898)
ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս, 1-ին փող.
Հեռ. 091-40-32-41
էլ. փոստի հասցե՝ vaghinak.yeghiazaryan@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 04.05.2023թ. կնքված N ՓՊՄԱՊՁԲ-23-7/28-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ընկերությունը 2023 թվականի 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ, քան 31.10.2023թ, պետք է մատակարարեր համապատասխանաբար 10000-ական զույգ ապրանք, ընդհանուր՝ 30000 զույգ: 2023 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներում նախատեսված մատակարարման ենթակա ապրանքի տարբեր խմբաքանակներ 3 անգամ Ընկերության կողմից մատակարարվել են, սակայն չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական պայմաններին:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» ենթակետը (մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում) և «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. նոյեմբերի 22-ին միակողմանի մասնակի լուծել է Պայմանագիրը 2023 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներում նախատեսված 20000 զույգ ապրանքի մասով:

Տեղեկացնում եմ, որ «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 5,487,000 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) և 28,949,412 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն ինչպես նաև Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում ենթակա է գանձման պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 39,279,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը՝ 78,558,000 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին: Տույժերն ու տուգանքները հաշվարկված են 2024թ. նոյեմբերի 2-ի դրությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Ելնելով վերոգրյալից տեղեկացնում եմ, եթե մինչև **2024թ. դեկտեմբերի 2-ը** ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **39,279,000** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **78,558,000** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «Մասիսի գարուն կարի ֆաբրիկա» ՍՊ ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև **2024թ. դեկտեմբերի 2-ը** ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2075 սենյակ:

Տեղեկացնում եմ նաև, որ պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ